

# ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԷՄԻՆ ՏԵԶԱ ՀԱՅԱԳԻՏԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՂԻՇԷԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

**Ք**ՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆ՝ մեր դարուն մէջ, հակայ մ'է անթուելի բազկօք, ամէն երկայնութեամբ, ջգօք, շարժմամբ և զուեով: Ամենուն բարեկամ է, ամէն բանով կը զբաղի, բայց թերեւս չի հասկընար զամենայն: Բեղմնաւոր Պրիարոոի այդ գանազան գոյները, լեզուք են. և ուսումնասիրաց համար մեծ շարշարանք մ'է տեսները՝ որ յոյն օրագրի մը կարծիք կը հերքուին շուետականէն, ու բոհեմ լրագրին հաւաքած ու պատմած դէպքեր՝ կը ստին մաճար կամ թուրք լրագրէն: Այնչափ դժուարին է հասնելն, նոյն իսկ մերձաւորաց մէջ մոտոգրութիւնն, որ բարին աչքէ կը վրիպի. ուստի կը ծնանի ու կը յառաջէ ծուլից քով՝ փափաք մը ռովորական լեզուի, գէշ լատինականի մը ու անելի գէշ ֆրանսիականի. իբրու թէ ազգերը, իրարու օգնելու նուիրական նախանձաւորութեամբ ինքզինքնին մոռնալու պարտաւս, բոլին, անօթի խոհակերաց բազմութիւն մը հետուները պիմեն՝ անուշահամ խորտիկներ սեղանի մը վրայ դնելու: Օրագիր օրագրի քով, ոճոյ, մտածութեանց մէջ լեզուն կը զանազանի, բայց յաճախ ալ կը նմանի. ի Լոնդոն յղկուած լեզուն, կրկին կը յղկուի ի Պոլիս. փայլը կը փոխուի, բայց առուեստը միշտ նոյն է: — Եղիշէի վարդանանց պատմութիւնը, նիւթոյն ծանրակշռութեամբ և ոճոյ վայելչութեամբ բախտաւոր գիրք մ'է Հայոց, որ կ'ուզեն և գիտեն անոր վայելքը: Տպագրութիւնք բազմութիւք. ձեռագրաց բազդաւորութիւնք մոռցուած չեն, թէպէտ զեռ շատ ընելիք կայ. ժամանակէ ի վեր մուծ տեղուանքը լուսաբանելու ջանք կ'ըլլուի. այլ և այլ թարգմանութիւնք ընծայուեցան Խոտաւացոց, Ֆրանսիացոց, Անգլիացոց և Ռուսաց, անանկ որ հայ գրոց մէջ Մովսէս միայն այդ բազմ ունեցած է, ամենուն հայրը: Եւ ինչպէս Մովսէս, նոյնպէս և Եղիշէ, հին գրաւոր լեզուէ փոխեցաւ ի նորն, և ունի իր կեանքը բնտանեաց մէջ, որով կրնայ հասարակ ժողովուրդը տեսնել այն վիպասանականին մէջ իր նախնեաց առաքինութիւնքը: Դժուարին է ըսելը թէ շատ դարերով յառաջագոյն մոռածուած գրքեր, ո՛րչափ կրնան ժողովրդական ըլլալ՝ որդւոց լեզուին փոխուելով. և թերեւս Գոեթե, փոնի Յիւտականաւորնք անելի վայելչաբանք կ'ըլլան Փլորենտիոյ խօսուած լեզուով քան անթանականաւ. զի խօսք նոյն կը մնան, և չեռ կարող զանոնք վունտել, կամ՝ նոր ժառանգներ ստեղծել, մինչ հոգին այնչափ փոփոխուած է որ կերպարանքն զքեզ կը խաբէ:

Եղիշէի բնագրին վերջին տպագրին վրայ, որ իր բնիկ լեզուովը հրատա-  
րակուեցաւ ի Մոսկուա խնամօք Խ. Յովհաննիսեանց, կը խօսի Գրիգոր Խա-  
լաթեանց՝ Թիֆլիզի հայ ընտիր հանդիսի մը մէջ, Մոսքովի. և որովհետեւ  
ձայնը հեռաւոր է, և ոչ ամենեցուն լսելի, գէշ չըլլար լսել ու լսելի ընել  
տալ\*։ Կատարելագործելով Միանսարեանցէ\*\* տրուած տեղեկութիւններն,  
հմուտ հայն կը թուէ հարկը տարիէ քիչ մը աւելի ժամանակի մէջ, քսան  
տպագրութիւնք Եղիշէի պատմութեան. առաջին անգամ հրատարակուելով  
ի Կոստանդնուպոլիս ի 1764։ Քաղաքաց համեմատ կարգի վրայ առնելով,  
այս պատկերը կ'ունենանք. Պոլիս 1764, 813, 860, 871. Պետրուրդ  
787. Նոր Նախիջեան 787. Կարկաթա 816, Թէոդոսիա 861, Մոսկուա  
861, 892, Երուսաղէմ 865, Չմիւռնիա 867, Թիֆլիզ 879, և վերջե-  
տիկ՝ ի գործունեայն Ս. Ղազար 825, 28, 32, 38, 52, 59, 64.  
(և ես կը յաւելում ի 1842)։

Մոսկուայի հրատարակիչը վենետկեանին հետ կը բաղգատէ իր բնագիրը.  
և որ բաւական է՝ անոր բուն բարեմասնութեանց վրայ դատաստան ընելու  
համար. բայց չի բաւեր ով որ ուզենայ, վազելով՝ այս կշռով կշռադասել Մը-  
խիթարեան հարց քննադատական ամբողջ այս երկը։ Հոս առ վայր մի կը  
թողում զխալաթեան, և իմ քանի մի ծանօթագրութիւններս մէջ կը բե-  
րեմ։ Ուսուցիչն Յովհաննիսեանց, վենետկոյ տպագրութիւններէն 1859ինը  
զիմացն ունի, որ Եղիշէի մասնագրութեանց ամբողջութիւնը կը բովանդակէ,  
հետեւեալ խորագրովս. Սյրոյն հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատե-  
նագրութիւնք, համեմատաբար ընտիր ընթերցուածոց գրչագրաց. բայց  
բնագիրն մերկ է, առանց այլեայլ ընթերցուածոց, (և զոր կը կոչեմ D.)։  
Այդ տարբերութիւնքը կը գտնեմք ուրիշ տեղ, 1828ին տպագրուած Պատ-  
մութեան գրոցը հատորին վերջը, և որ աւելի են թուով՝ ի հատորի Մա-  
տենագրութեանցն հրատարակելոյ ի 1838, ի ստորեւ իյիցն. 59ին տպա-  
գիրը կը հետեւի 52 թուին եղածին, որոյ փոփոխութիւնքն եղած են ուրիշ  
գրչագրի մը վրայէն, որ առջի տպագրաց աստի կեւ գտնուած ու ծանօթ չէր։

Հիմա բաննք Մոսկուայի տպագիրը աստի և անտի։ Յ'էջն 10, տող  
4, կ'ընթեմու առաջոյ, և կը յաւելու թէ վենետկեանը ունի առաջի։  
Ստոյգ է որ ի A. 9, 6. B. 2, 22. C. 7, 6. D. 6, 14. Բայց ի  
B<sup>3</sup> կը գտնեմք առաջոյ (Հոս հայագէտ ուսուցիչն այլեայլ օրինակներ մէջ

\* Եղիշէի պատմութիւնը վարդապետ, ըստ Անճեւացեացն օրինակի. Խ. Յովհան-  
նիսեանց. Մոսկուա, 1892. Քննադատութիւնն տպագրեցաւ ի Զ. Թի. հանդիսին,  
և է 15 էջ. Առանձինն ալ հրատարակուած է։ Նեղինակն, ինչպէս ծանօթ է,  
հայերէն լեզուի ուսուցիչ է ի Լազարեան ուսումնարանին Մոսկուայի։

\*\* Իր ընտիր Bibliographia Caucasica et Transcaucasica գրոց մէջ, որ ցանկէ  
մը շատ աւելի վեր, բայց զժբարդդարար անկատար մնացած է, տպ. Պետրպ.  
1874-76. Եղիշէի տպագրութեանց և Թարգմանութեանց վրայ կը խօսի յէջ  
519-521։

բերելէն ետքը՝ կը յաւելու։ Ասով յայտնապէս կը տեսնուի թէ Միխիթա-  
րեանց գործը աւելի ընդարձակ, աւելի օգտակար է՝ որ աչքի չերևանար միայն  
անոնց վերջի տպագրութեամբ զբաղողին։ և զայս հարկ էր յիշեցընել։ Յու-  
սալի է որ ասդին անդին ցրիւ գտնուած ընթերցումածոց տարբերութիւնք՝ հաւա-  
քուն, նաեւ ի Ս. Ղազար, մէկ հաստորի մը մէջ։ մասնաւորն որ գտնուածապէս  
քով ամէն ուզածդ չես կրնար գտնել, որով բաղդատութիւնք և համեմատու-  
թիւնք դժուարին կ'ըլլան։

Բայց ի տպագրաց՝ կը յիշատակուին նաեւ թարգմանութիւնք։ Աւելի ծա-  
նօթագոյնքն են անգղիականն Նայմանի, իտալականն Բոլսեփպ Գարբելլետ-  
տեայ, և գաղղիականն Գապարանեան Կարապետի\* և վիկտոր Լանգլուայի\*\*։

Գարբելլետտի, վենետիկցի, վառլըռուն՝ անհանդարտ հանճար մ'էր. իր  
այս յատկութիւնք կ'երևնային աչքերուն ու գնացիցը մէջ, ինչպէս նաեւ ի  
գրութիւնս։ Բանադատուած շատ ու շուտ գործել, որպէս զի աշխատանաց  
արդեամբք կարող ըլլայ անուցանել (եղբօր) ընտանիքը, զոր հայրը չէր կրցած  
հարբատացընել, ետեւ չեղաւ աշխատութիւնները յղկելու կամ զբածին վրայ  
սարակուելու, որոց համար ժամանակի և սուրկի կարօտութիւն կայ, և որ իրեն  
համար առաջին պիտոյքն չէին։ Ուստի և հարկ է իր գրոցը մէջ մտցնել ըն-  
տիրն ի չափաւորէն, և ներողամիտ լինել ոճոյն շատ զանցառութեանց։  
Բայց Եղիշէի մէջ, մատենագրին ընտրութիւնը օգտակար եղած է նաեւ  
թարգմանչին ուղղութեան. և եթէ թարգմանութիւնն չունի այն յարգ՝ զոր  
տուած է Թումանգէոյ՝ Միխիթարեանց Մովսիսին, վայելութիւն տալով իտա-  
լական լեզուին, նաեւ կրակոտ երէցն ուզած է հետեւիլ մեր լեզուով՝ հայ-  
կականին, եռանդեամբ մրցելով ձեռք բերել զայն։ Խիստ՝ բայց ոչ ջլատեալ  
ոճով, և որ աւելի պէտք ունի յղկման քան նորոգութեան։ Սրբոյն Ղազա-  
րու հարց կ'օգնէին իրեն։ սակայն ոչ միշտ, ապա թէ ոչ՝ չէին թողոր որ  
երբեմն ինկնայ\*\*\*։ Այլ նշանակեմ քանի մի մանր մունր բաներ, չէ թէ հան-  
գուցելոյ մը ուսուցչութիւն ընելու տարօրինակ եռանդեամբ, այլ ուրիշ խոր-  
հրդածութիւն մը աւելցընելու դիտմամբ, որ թերեւս Լանգլուա ալ՝ աչք մը  
ձգելով հայ բնագրին, սովոր էր միւսը գնել իտալականին վրայ, և որ ա-  
րեւմտեայց համար դիւրակլանելի պատառ մ'է։

\* Soulèvement national de l'Arménie Chrétienne. Փարիզ, 1844.

\*\* Բերկրորդ հատորի (էջք 177-281) իւր Collection des historiens...

\*\*\* Նեւ՝ շատ գովեստ կու տայ Գարբելլետտիի՝ երբ կ'ըսէ. « Դիմելով ի խոր-  
հրդակցութիւն գրչագրաց սրբոյն Ղազարու, իր բանասիրական այս գործոյն մէջ  
կրցաւ աւելի ճշդութիւն գործածել. (L'Arménie Chrétienne, 1886, էջ 362)։  
Բնագրացի գիտնականը ոչ ուղղապէս կը մեկնէ թարգմանչին կողմանէ ի յա-  
ռաջարանին գրուած այս խօսքերը. « Ինծի առաջնորդ առի 1838 ին տպագրող,  
որ հաւատարմութեամբ եղած է հայ ստոյգ գրչագրաց վրայ, որ կը պահուին ի  
հռչակաւոր մատենադարանի Միխիթարեանց »։ Այս թարգմանութեան համար  
Թումանգէոյ կ'ըսէր, թէ « աւելի հաւատարիմ է քան վայելարան »։ (Studj ori-  
tici, 2, 383)։

Հայերէնն կ'ըսէ. (169). « Եթէ ապրեցի անօրէն այն ի մեծ պատե-  
րազմէն, մեծաւ անարգանօք տամ ըմպել նմա զբաժակն դառնութեան մա-  
հու » . որ է իբրեւ զբաժակ ապականութեան առ Եզեկիելի (ԻԳ. 23).  
Գարբելլետտի, ոչ գէշ՝ այլ ազատօրէն կը թարգմանէ. Con gravissimi  
rimbrotti gli porgerò a bere il calice della morte più atroce.  
(էջ 116). և Լանզուա (215); Je lui ferai les plus graves repro-  
ches et je lui présenterai à boire le calice de la mort la plus  
cruelle. Դիւրին չէ հաւատալ որ բառից ընտրութեան մէջ, ազատաբար  
երթալով և յեղիշէէ չառաջնորդուած, այսպէս կարողանային երկու թարգ-  
մանիչք իրարու հետ համաձայնիլ :

Հայն կ'ըսէ. (175). « Որ փախչէր՝ վատանուն յաշխարհի երեւէր, և  
անողորմ մահ ի նմանէ ընդունէր » . Գարբ. (119) Chi temeva... incon-  
trava quindi una barbara morte. և Լանզուա (216). Celui qui  
était pusillanime...

Հայն. (199). « Հեղուժն արեան մերոյ ընդ արին սուրբ մարտիրոսացն » .  
Գարբ. (155) col sangue fedele dei martiri. ընդ որ հաճելով Լանզ-  
ուա, բաւական կը համարի ըսել. que notre sang se mêle avec celui  
des martyrs.

Հայն. (68). « Առաւել քան ընդ ճարտարաբանութիւն, ընդ համարձա-  
կութիւն աներկիւզութեանն զարմանային » . Գարբ. (57). E soprattutto  
si meravigliavano dell'eloquenza e dell'intrepidezza del loro  
coraggio. ուստի և Ֆրանսիականն; Surtout de leur éloquence et de  
leur courageuse témérité.

Հայն. (185). « Գտաք մեք անկեալք ընդ տնողորմ դատաստանօք՝ ըստ  
մեղացն յանցաւորութեան » և Գարբ. կը թարգմանէ. Sotto uno spietato  
giudice (126), և փոքրիկ փոփոխութիւնն զգալի չէր ըլլար, եթէ չծա-  
ռայէր աւելի նուազ գթոտ դատաստանի մը. զի Լանզուա գնելով (218)  
nous tombâmes sous un joug impitoyable, կասկած կու տայ թէ  
juge զրաժ է ինքն, և սխալ ընթերցմամբ կամ դիպուածական սրբազորու-  
թեամբ եղեր է joug.

Ուստ թարգմանութիւնք կրկին են, և արդէն սակաւագիտք. եւ ձեռքս  
ունիմ երկրորդը, հեղինակին հաճոյակատար բարեսիրութեամբ. հնազոյն է  
Պետրոսի Սամուէլովի Շահնեան (Թիֆլիզ, 1853). միան է Եմիլ Տիկերն  
(Տիկիոն) ուսուցչի, և կը գտնուի յերկրորդ մասին Հայկական ուսմանց  
(Армянские школы), զոր ի 1884 տպագրեց ի Թաբրիզ:

Գիտուն հայագէտը, ուր որ կը հեռանայ իր թարգմանիչ ընկերներէն,  
անոնե՛նդ և սուր քննադատութեամբ պատճառն ալ կը զրուցէ. և ոչ միայն  
կ'օժանդակէ ուսումնասիրել ի մեկնաբանութեան իրաց և խօսից, այլ ուր որ  
անթարգմանելի է բնագիրն՝ այնպէս որ իմաստի ընտրութիւն առնելով՝ ծա-  
նօթութեան մէջ կը նշանակէ ինչ որ բուն բառին առումն է և աւելի մեր-

ձատր հայ բնագրին: Ամբողջ Թարգմանութիւն մը չէ. ու ի վերջ եօթնեւ-  
բորդ գրոցն կանկ կ'առնու:

Թէ անկէ անդին Եղիշէի է, վրան երդուննալու չափ ստոյգ չէ: Պատ-  
միչ մը՝ իր գրութեան մէկ մասին վրայ կրնայ ընդարձակուիլ, կրկին ձեռք առ-  
նուլ առ ի գեղագարգիւ, բայց ինչ թուի թէ մատենագրի բնութիւնը այդ-  
պէս շուտով փոխելը կարելի չէ, և թէ երկարաբանութիւնը, թէպէտև շա-  
քարապատը, չեն համապատասխաներ պատմութեան հիւթոյն, ուր որ տակի-  
տեան համառօտախօսութիւն չկայ, այլ աւելի պարարտ, զարկարուն ոճ մը:  
Ընտիր գարուց արուեստը՝ տարակոյտ չիկայ որ իրարու նման են. և իտա-  
լեան մատենագրութեան երեքաստան դարու հեղինակ մը՝ կրնայ նոյն ժա-  
մանակի ուրիշ հեղինակի մը հետ փոխանակուիլ. բայց եթէ յաշոյղակ նմա-  
նող մը, աւելի ճոճ ի բանս, ուզենայ նոյն ոճով յԵղիշեայ պատմութեան  
փառաւոր պատերազմաց պատմութիւնն ընել, իր ամէն ջանքն ուրիշ բանի  
չեն ծառայեր՝ բայց եթէ աւելի հեռանալու իրմէ: Այս քննութիւնը Հայոց  
կը պատշաճի, որ հին աւանդութեանց սիրովը՝ չեն վատահիբ մեր անհիմն  
նրբութեանց կամ իմաստակութեանց: Որ և ինչ կերպով՝ եթէ Թարգմա-  
նիչը երկու են, անով գրութիւն յարգը չի նուազիր, հարուստն Եղիշէ չաղ-  
քատանար, և Հայք՝ թէպէտ անանուն մը կը յարգեն, բայց մատենագիր  
մը աւելի կ'աւանան:

Ի Յունաստան կը վիճեն նոր մատենագրութեան լեզուի նկատմամբ.  
և աւելի քերթուածոց քան արձակ շարագրութեանց մէջ՝ վիճաբանութեանց  
կը հետևի, և երբեմն կը կանխէ քերթողաց գործը. թէպէտ և հիմա՝ ո-  
ճոյ ազատութիւն թողով՝ բանից կերպարանք կը սկսին նմանիլ իրարու: Իսկ  
ի Հայաստան՝ նոր արուեստը երկու ճակատ ունի. թէ՛ արևելեան և թէ՛  
արևմտեան լեզու և գրականութիւն կայ մէջերին. և այն՝ ազգին ոչ փոքր  
փնտռով և վտանգաւ յապագային: Վենետիկը և Վիեննայի Մխիթարեանք,  
երբ հնոց նմանութեամբ չեն գրեր, աւելի արևմտեան լեզուն կը գործածեն,  
որ հնագոյն ծագում ունի, ընդարձակագոյն ասպարէզ, որ Պոլսոյ Հայոց լե-  
զուն է, և զայն լաւ հասկնալու համար օգնեն նաև բառարանք և քերական-  
ութիւնք, և ամենէն ընտրելագոյնն՝ Այալնեան Հ. Արսենի (արքեպիսկոպո-  
սի): Իսկ Եղիշէի երկու լոյս տեսած Թարգմանութիւնք՝ ընդհակառակն արեւ-  
ելեան լեզուով են, Ռուսիոյ հպատակ գաւառաց մէջ գործածուած լեզուով.  
առաջինն\* սակաւագիտ, երկրորդը\*\* դեռ նոր հրատարակուած, որոյ վրայ  
հեղինակաբար կը խօսի յ'Ամսթրայ հանդիսի Վիեննայի Հ. Յ. Տաշեան:

\* Սիմէոնեանցի ձեռքով որ 1863ին հրատարակեցաւ ի Թիֆլիզ: Հանդես (1893,  
118) կը համարի ի Մոսկուա տպագրուած առ Փափաղեանի, ի 1861. Բայց այս  
տպագիրը՝ բնագրին է և ոչ Թարգմանութեան (Հմմ. Միասնաբեանց, 520):  
Իսկ չկրցայ ձեռք ձգել:

\*\* Եղիշէի պատմ. Վարդանանց. Թարգմ. Հ. Վուկասեանց, Թիֆլիզ, 1891  
(էջք 289 և 15 յաւելուած):

Ինչպէս կ'ըսէ նա, թարգմանիչք կամ առատք են ի ծանօթութիւնս գրոցն զոր կը հրատարակեն, և կամ ազահք. և խիստ ազահ է Ղուկասեանց, որովհետեւ զոհ կ'ըլլայ այն քանի մի ծանօթութեամբք, զորս աւելցուցեր ու գրեթէ գրէն զուրս դրեր է, հնգետասան էջերով. մինչ վարդանանց պատմութիւնն, երկու ժողովրդոց և երկու կրօնից իրարու հանդէպ հակառակելու դարուն, կը պահանջէ յընթերցողէն՝ աւելի ճիշտ գիտութիւն պարսկական իրաց: Կրնայ թերեւս աւելցուիլ որ թարգմանութիւններէն յառաջ՝ հայկական բնագիրը առանց շատ մեկնութեանց՝ արդէն տարածուած էր յազդին. ու նաեւ գիտունք ծաղկոնք եւեթ հաւաքելով ալ զոհ կ'ըլլային. նման իլիականին, որ այնչափ ժողովրդոց ազգային գիրք դառնալով, կը հրապուրէ և կը յանկուցանէ նաեւ զանոնք որ հին սովորութեանց անտեղեակք՝ ստիպուած են զուշակութեամբ իմանալ թէ այն հին ոգին՝ իր նոր կերպարանօք ալ ի՞նչ կ'ուզէ հասկըցընել: Այս կողմանէ ալ՝ արդիւնքը կը ցուցնէ գործոց լաւութիւնը. և եթէ նոր գիրքը շուտով կ'աներևութանայ գրալմանառաց կրթականն ուրիշներուն նման ու տները կը մանէ, իր վախճանին հասած է: Ի՞նչ ըսել է ժողովրդական ըլլալ: Ինչուան ո՞ր կէտը կը հասնի բարձրանալով կամ նուաղելով, այլ և այլ մտաց մէջ որ կը զանազանուին իրարմէ բնածին կարողութեամբ կամ մշակութեամբ: Երբեք՝ է արդեօք ժողովրդականէն, գեղեցկէն ու ի բարւոյն՝ սանդուխք մը կազմել, ու աստիճանաբար համբել՝ ինչպէս ջերմութեան համար կ'ընենք, քսան՝ երեսուն աստիճան: Բայց ո՞ր և իցէ կերպով՝ հին սկզբնագրին նոր տպագրութեամբք նորոգուելը, և շուտով սակաւագիւտ դառնալը, շատ բան յուսալի կ'ընէ ի ուս և նոր հայերէն լեզուով եղած թարգմանութիւններէ:

Եւ ահաւասիկ մէկէն լուրջ խօսք մը Մխիթարեանին քննապատասկանին մէջ: Իր սովորական խոհմութեամբ, ինքն՝ արեւմտեան հայ, չի համարձակիր գտնել թէ որպիսի՝ բարի ընդունելութիւն պիտի ընէ արեւելեան հայն. միայն կ'ակնարկէ ու տարակոյս կը ցուցնէ: Եւ եթէ ազգին մէջ զանուղ գիտնականք՝ կը շարունակեն մնալ այս անտուգութեանց մէջ, ո՞րչափ ապա վհատելու են անոնցմէ զուրս եղողներն, թէպէտ և երեւայ թէ երբեմն խիստ կ'ընդարձակի ոճը, և երբեմն ալ մէկ կամ միւս մասը զուրս թողուած, որ կրնայ թերեւս ձեռագործաց պակասութիւն ըլլալ: Երբ՝ օրինակ իմն, թարգմանուած վստիւնք թէ ամենք ժողովրդիկն յորիկ յերկիր և խոհարհեցոցիկն զգոյշախ, բնագիրը՝ առանց տարբերութեան ընթերցուածոց ի վերջոյեան տպագիրս կամ Մոսկուայի, անկէ շատ պակասը կ'ըսէ. և միւս կողմանէ, հինը զոր՝ ծածողը, յաճախ նմանելով օտարին, նոյն արժէքն ունի նաեւ խօսուած լեզուին մէջ\*: Մանր հետազոտութեանցը մէջ զոր գիտնական Տաշեան Հայրն

\* Լուրջ հարցմունք մը, ինչպէս ամէնք կը տեսնեն, և ամէն ազգի համար՝ իր տանը մէջ, կրնայ կրկնուիլ, անոնց մանաւանդ՝ որ հին և փառաւոր ժառանգութիւն մը ունին:

կ'ընէ հնոյն և նորոյն վերաբերութեանց նկատմամբ, շատ ուսնելիք բաներ կան. ինքն այն քննադատներէն մէկն է յորոց մասնաւորապէս ցանկալի է ունենալ, հայ մատենագրաց այս կամ այն անձին վրայ՝ բացատրութիւն կամ մեկնութիւն մը, որ օրինակներով՝ նոցա բռնած ոճոյն ճշգրիտ պատմութիւնն ընէ :

Նոր տպագրութեան վրայ կը դարձնէ իր ուշադրութիւնը Մոսկուայի քննադատն, որովհետեւ մեծ մատենագրաց զրքերը անփոյթ չեն ըլլալիք. և որովհետեւ Յովհաննիսեանց կ'ուզէ ըրած խուզարկութեամբք, ընթերցուածոց ընտրութեամբ, ծանօթութեանց և բառարանին լուսաբանութեամբք՝ օգտակար ըլլալ զպրոցաց, ուստի և իմաստուն տեսութեամբ բռնադասուած է թալաւթեանց ծանուցանել թէ ի'նչպէս զպրոցաց մէջ թէ՛ գէշն և թէ բարին առ ժամանակ մը իրենց պտուղը կը բերեն, և թէ մեծ զգուշութիւն ընելու է հոն սերմանուած հունտին :

Հրատարակիչը մէկ գրչագիր մը միայն առաջնորդ կ'առնու՝ իրմէ Անձեազեաց\* կոչուածը, առանց լաւ մը բացատրելու անոր ունեցած արժէքը, և թէ ինչո՞ւ նսխամեծար սեպելու է այն քան զայլսն, ուր Եղիշէի պատմութեան զրչագրաց օրինակք բազմաթիւ են, և նշանակ մ'է այն մեծարանոց զոր ունին Հայք առ այն գրուած : Վենետիկեան տպագրաց վրայ խօսեցանք. թալաւթեանց կ'ուզէ ճիշտ բաղդատութիւն մը երկու հնագոյն տպագրաց հետ որ ի Պոլիս և ի Պետրբուրգ, որ աւելի պահանջ մը չէ զրքի մը. Եւ ոչ միշտ այս Անձեազեաց զրչագիրը, որ իր տէրը կ'ըլլայ ձեռքին մէջ և զպրոցաց բռնաւորը, զերազանցէ յընտրութեան քան զայլ բնագիրս՝ որ յայլ աղբերաց ծանօթք են մեզ. և այս նկատմամբ՝ քննադատը բաւական կը համարի վենետիկեան տպագրաց երկու տեղ միայն համեմատել՝ նոր եկող զրչագրին հետ. 1859 տպ. կ'ընթեռնու Արդեանք, որ յառաջին տպագրութեան էր Արդեանք. փառաստ բիւզանդացի ալ կը հաւաստէ զայն (Ե. 6). և կը վատմարանայ նոր ընթերցուածն Սարդեանք\*\* : Վենետիկեանն ունի Դաւան. իսկ Մոսկուային Դաւան\*\*\*. թէպէտ Ատորիք և Արաքք՝ առաջին անունն աւելի ճիշտ կը ցուցնեն : — Վենետիկոյ հրամատար աւելի մեր.

\* Որոյ համեմատ 1861 ին տպագրեցաւ Թէոփոսիոյ (Փէֆէի) տպագիրը Խ. Փալֆայեան վարդապետի խնամք :

\*\* Կրնամ յաւելուլ որ 1838ի տպագրին մէջ գրուած է զ-Արդեանք (65), բայց ծանուցանելով թէ զրչագրին ունի զ-Արդեանքս. նշանակուած են և այլ ձեռագրաց ընթերցուածք, յորս կը գտնենք և նոր ենթագրուածները զ-Արդեանք, զՍարդեանք, զՍարդեանք. Նոյն ընթերցուածք և նոյն տարբերութիւնք զրչագրաց կային նաև 1828ի տպագրին մէջ :

\*\*\* Տարբերութիւնք ի B՝ են (42) Դաւան և Առասան, Դասան հրատարակողաց կողմանէ գրուած է, ուր զրչագրին ունի Դասան. Նոյն ընթերցուածն է նաև ի A. տպ. (87 և 385) :

ձառոր է fra-matâr, զոր Նոյտէքէ պահլա\* լեզուէ յառաջադայած կը հա-  
մարի, քան թէ նոր տպագրին հրամանատար\*\* ընթերցուածը:

Քննադատը այն եղակացութեան կը հասնի թէ ի ստորեւ իջից գրուած  
համեմատութիւնը տարակուսելի կ'ընեն ուրիշ հիմանց վրայ գրուած շէնքը.  
և եթէ բաղդատութեանց պէտք ունէր՝ ինչո՞ւ լակ վերնետական տպագրաց  
հետ կ'ապուիլ: Ուր հրատարակիչն կրնայ թերեւս պատասխանել, թէ այն  
բաղդատութեամբ կ'ուզէ իր գրչագրին քոյնն ու կերպարանքը ընծայել և ոչ  
այլոց վրայ գերազանցութիւնը. բայց քննադատը կրնայ յաւելուլ, թէ այն  
միակ՝ ու հպարտութեամբ լեցուն վկաներէ՝ չեն կրնար օգտուիլ զպրոցք:  
Տարբերութեանց ճիշդ ցուցակ մը, եթէ ոչ պարզաց, օգտակար էր բնագրին  
և այն ուսումնասիրութեանց պատմութեանը՝ պահպանող և ուղիղ քննադա-  
տութեանց ձեռքով. բայց դժբաղդաբար՝ այս ապերախտ աշխատութեան մէջ՝  
ուսուցիչն Յովհաննիսեանց շուտով յոգնեցաւ, որով հարկ է խալաթեանցի  
հետ երկրորդել՝ թէ մոռցուած ու դուրս ձգուած ընթերցուածոց տարբերու-  
թիւնը բազմաթիւք են. ինչպէս նաև բազմաթիւ՝ բաց ի վերջ գրոցն նշանաւ  
կուածներէն, աչքէ վրիպած սխալներն, որ զիւրաւ ներելի չեն փոքր ծա-  
ւալ ունեցող գրքի մը համար:

Եթէ հրատարակիչն կը կարծէր, ինչպէս կ'ականարկէ յառաջաբանին մէջ,  
թէ գեռ շատ ընելիք կայ դասական գրոց համար, պէտք էր որ աւելի աշ-  
խատէր այս գրոց վրայ՝ որ Հայաստանի դասական գիրք մ'է: Օգտակար է  
պատմչի մը մէջ, որպէս զի անձանց և տեղեաց անուանք լուսաբանին,  
ինչպէս կ'ընէ ծանօթութեանց մէջ. բայց արդեօք ո՞նց նրբաբանութեանց մէջ՝  
հարկաւոր չէր առաջնորդել երիտասարդ ընթերցողին պէտք եղած ազդարա-  
րութեամբք:

Եւ մեք օտարքս, մինչև վերջի տարիներս, երիտասարդ ընթերցողաց տեղ  
ենք, որ շատ ի Հայոց, և շատ գրքերու համար, կ'ուզենք այս ողջ ու  
շահաւետ կրթութիւնը, ամէն մտածութեանց ոչ միայն ճշմարտութիւնը, այլ  
նաև գեղեցկութիւնը ձեռք ձգելու համար: Ո՞նց Կարձուածներ շատ են յի-

\* Կը պահեմ պահլառ անունը, որովհետև Խալաթեանցի հին պարսկերէն  
կոչելը կրնայ վրիպանաց մէջ ձգել: Մատար, կ'ըսէ Նոյտէքէ (Տապարի 9), պահ-  
լաւ լեզուով կը նշանակէ եկող, և հրամատար կրնայ նշանակել՝ յառաջադիմ.  
(Հմմ. Լիւթուսի omnia, uti deoemviri praeierant: XLIII, 13): Բայց բառը միշտ  
տարակուսական կը մնայ, ուստի և չէ արժանի այնչափ ազատութեամբ կոչել ի  
վկայութիւն. ինչպէս և ոչ ի բակտրիականէ արա և ման բառերէ երևակայե-  
լով՝ հրամանատար, իբրև խորհրդակցան: Պարսկականն այս տեղ, ինչպէս Արաբք  
իրենց ընդօրինակութեանց մէջ, է Ֆարմատար, որուն կը հետևի Նոյտէքէ, և  
իրմէ վերջ Տիլիոն ի ծանօթութիւնս իւր Թարգմանութեան:

\*\* Վերնետական հին տպագրութիւնը՝ ունին հրամանատար. ար քուցէ Ժո-  
ղովրդական ստուգաբանութիւն է. և ընթերցուածոց տարբերութիւնը չկան, որ  
առասոք են ընդհակառակն՝ վերոնշի բառին նկատմամբ:



դիշէ՝ ու մեկնութեան կարօտութիւն ունին. և ասոր վրայ կը պնդէ խալաթեանց, չէ թէ անոր համար որ իր հայրենակիցը չգիտէ զայն, այլ վստահ չէ ուզած:

Թե հրատարակիչը ծանօթութեանցը մէջ չէ ուզած օգտուիլ հայազիտաց երկասիրութիւններէն՝ որ մասնաւորաբար լուսաբաններ են Սասանեանց դարը, և թէ ժամանակագրութեան նկատմամբ այնպիսի հիմանց վրայ կը յենու՝ որ հիմայ խախտուած ու տեղերէն շարժած են, կամ ծանօթ չէ փելիքս Նեւհայագիտին Եղիշէի վրայ մէկ գրութիւն \* (L'Arménie chrétienne, Լուսէն 1886, էջ 287—317), կամ այն ոսկեղէն գրքակին, ռոմլը և Նիւթով, որ իր վարքը կը բուխնորակէ (Սոփերը հայկականը, հատ. 2. էջ 39—45). ասոնք մեղք եր են. և ասպաշխարութիւնը՝ երեսը զարնէն է. բայց այսպիսիք համառօտելու ծանօթութիւնը չեն, այլ ուսումնասիրելիք. ինչպէս նաեւ ռուս—հայ բառարանին վրայ դիտողութիւնը՝ ատենէ ու նպատակէ դուքս են:

Քննադատին խօսքերը՝ ոչ առանց քաղաքաւարութեան, այլ խիստ կը թուին և են: Արեւելի է, իրեն հետ համաձայնելով ալ, ուրիշ եզրակացութեան քալ. թէ բնագրաց բաղդատութիւնը՝ կրնան աւելի ճարտարագոյն և համբերող ձեւաց ձգուիլ, բայց բառարանի և ծանօթութեանց համար՝ Յովհաննիսեանց կրնայ դիւրաւ կատարելագործութիւն տալ մասենագործն օճոյն նկատմամբ, աւելցընելով զայն որուն կարօտին երկու զարոցը, Հայաստանի մանկանց և բանասէր ուսումնասիրաց Եւրոպայ: Արժանաւոր է ամենայն խնամոց, և նորոգութիւնն իսկ այս ոսկեղէն գրքակին....:

## ՀԱՅՔ ԵՒ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Տես յ'էջ 458)

**ՀԱՆՈՍՈՒԹԻՒՆՆԵՆ** ՚ի նպատակ մեզ կը գործէ այլ ևս կարծես իւր բոլոր գործութեամբ և մանրակրկիտ քննութեամբ: Մեր Նախահօր գաղութն և առասպելաբանեալ (?) զարնն ՚ի Հայս որչափ հեշտեաւ կրնայ մեկնուիլ այսու: — Սակայն որչափ ալ վստահաբար յուսամք և պարծիմք՝ միշտ յուսոյ վրայ հաստատուած պարծանք մ'է. յոյսն որչափ ալ բնական հետեւանօք և վճիտ տեսութեամբ՝ սակայն միշտ յոյս է, վերացեալ բան մ'է, փափաքանաց յազուրդ պէտք է. որչափ և ստոյգ հետեւութիւն՝ սակայն յօշափական ճշմարտութիւն չէ:

\* Թէպէտև այս գրութեան չի կրնար շատ բան սորվեցնել հայու մը՝ որ Եղիշէի բնագիրը դիմացն ունի: Նեւ՝ հայկական իրաց տեղեկութիւն չունեցողներու ժառանգութիւն մը կը մատուցանէր՝ որ տասը տարի յաւաք աւելի ասկաւազիւտ էր: